ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՌԱՄՍԵԱՑ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ԵՐՈՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆԻ

ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

XVII ԳԻՐՔ

1908 Թ. № 1

ԹԻՖԼԻՍ

ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՏ. 7

1908

ՍՎԱՍՏԻԿԱ

(Swastica)

Ա. ԵՋԵԿԵԱՆԻ

Տարբեր ձեւի խաչեր։—Երկու կողմից կազմուած պարզ խաչը պատկանում է նախապատմական ժամանակներին։ Նորա երեւումը աշխարհի երեսին կորած է հնութեան մէջ։ Պատմականօրէն նորա ծագումը վերագրել կարելի չէ ոչ մի դաբաշրջանի, ոչ մի երկրի, ոչ էլ մի ժողովրդի։ Ձեւն ինքնին այնքան հասարակ է, որ կարող էր ունենալ իւր սկիզբը ինչ ժողովրդի մէջ էլ ասես, որքան և նախնական լինէր սա, և ամէն ժամանակում, որքան և հեռաւոր։

*Իբրև խորհրդանիշ (*symbol*) կամ զարդ (*ornament*), խաչը միատեսակ չէ. ուրիշ է լատինականը, ուրիշ՝ յունականը, ուրիշ ուրիշ են և միւսներինը։ Նա բաժանւում է մի քանի դասի, մինչև իսկ, բաղադրուելով կնքանշանների (*heraldry*) հետ, հասնում է մի քանի հարիւր ձեւերի։*

Յունական խաչն, որ հաւասար թեւեր ունի և ուղիղ անկիւններ, գտնուած է Ասորեստանեան և Պարսկական յիշատակարանների, սալերի, Յունական դրամների և արձանների վրայ։

Ս. Անդրէասի կոչուած խաչը նոյն Յունականն է, միայն թէ հանգչում է երկու սրունների վրայ։

*Ունկաւոր խաչը, Եգիպտական դիցաբանութեան համաձայն, ներկայացնում էր Անք-ը, Քա-ի նշանակը (*emblem*), մարդու կրկներեակը (*spiritual double of man*)։ Դա նոյնպէս Օսիրիսի Իսիսի հետ զուգաւորութեան նշանն էր, և նկատուած էր որպէս խորհրդանիշ բնութեան սերական (*generative*) սկզբունքին։*

*Թաու խաչը, Յունական T գրին նման լինելու պատճառով այդպէս կոչուած, անստոյգ, թէև հին, ծագումից է։ Սկանդինաւեան դիցաբանութեան մէջ նա Թոր-եան մուրճ (*Thor'shammer*) անունն է կրում։ Նա կոչուած է նաև Ս. Անտոնի խաչ, Եգիպտացի Անտոն անապատականի անունով, և կապոյտ գոյնով էր ներկւում։ Կլարկսօնի ասելով այդ խաչը դրոշմւում էր Միթրակեանների (*Mithracists*) ճակատին՝ գաղտնիքներին հաղորդակից ընդու-*

նուելիս։ C. W. King-ն էլ այն կարծիքն է յայտնում, թէ Թաու խաչը դրոշմում էին այն մարդկանց ճակատին, որոնք կոծ էին անում իրենց մէջ գործուած անօրէնութիւնների վրայ (Եզեկիէլ թ. 4. Անց ընդ մէջ քաղաքիդ Երուսաղէմի, և դիր նշան ի ճակատ արանցդ որ հեծին և յոգոց հանին ի վերայ անօրէնութեանցն գործելոց ի մէջ դոցա)։ Նա համարուած է նաև առականքի (phallos) նշանակը։

Խաչի մի ուրիշ տեսակն էլ երևացել է երկրորդ դարում, բաղկացած ս. Անդրէասի խաչից և յունական P (po) տառից։ Այդ երկու նշաններն էլ յունական Քրիստոս բառի սկզբնատառերն են և այդ անուան փակագիրն (monogram) են կազմում։

Մալթայական խաչը, Մալթայեան զինուորական կարգի կամ ասպետների նշանն է համարուում։ Նորա ծագումը միջնադարեան է։

3.

2.



1.

Կելտական խաչը երկու ձևով է ներկայանում։ Դոքա գլխաւորապէս Իռլանդային և Սկովտիային են պատկանում, և սովորաբար քարէ խաչեր են և յաճախ կանգնուած են լինում շուկաների վրայ ճանապարհագլխներին։

Higgins-ը խաչի ծագման մասին ասում է, թէ Թիբէտի կառավարչի պաշտօնական անունը, Լամա, խաչին յատուկ հին Թիբէթական բառից է յառաջ գալիս, որի նախնական հեգումը լ-ա-մ-հ էր։

Իբրև կատարման գործիք (մահագործիք), խաչը, բացի երկու իրար կտրող և չորս թև արձակող ձողերից կազմուած լինելուց, ունէր յաճախ և այլ ձևի կազմուածք, ի միջի այլոց, օրինակ Y դա, որի վրայ դատապարտուած անձը կախուում էր գլխիվայր, ոտները վերի երկու ճիւղերի վրայ գամուած։

Սվաստիկա.—Խաչի բազմաթիւ կերպերից ամենահինը Սվաստիկան է։ Սա տարբերուում է յունական խաչից նրանով՝ որ թեւերի չորսի էլ ծայրերը ծռուում են, ուղիղ անկիւնով, դէպի աջ կամ դէպի ձախ։ Թեւերը դէպի աջ կամ դէպի ձախ ծռուող ձևերին Մաքս Միւլլէրը տարբեր նշանակու-

թիւն է տալիս։ Դէպի աջ ծռուածները նա համարում է իսկական Սվաստիկա, իսկ ձախ ծռուածներին նա տալիս է Սուաստիկա անունը։ Բայց նա չէ կարողացել նոցա այդպէս անունով տարբերելու հաւանական պատճառաբանութիւնը տալ, բացի Բիւրնուֆից՝ որ համարում է դէպի աջ ծռուածը արականի նշանակ, իսկ դէպի ձախը՝ իգականի (նկ. 3)։

Բացի վերոնշանակեալ պարզ ձևերից՝ Սվաստիկան ունի նաև շատ բազմակերպութիւն. կայ՝ որի ծայրերը մի քանի անգամ են ծռուում ուղիղ անկիւնով, կայ՝ որ միջահատութեան անկիւններում և կամ ծայրերի շուրջը կէտեր ունի. կայ՝ որ կռածագ է կամ կորածայր—միոլոր կամ բազմոլոր—կայ՝ որ եռաճանկ է, կամ եռոտնեայ, կայ և բազմաճանկ. կան էլ՝ որոնք սիրտ տեղում շրջանակ կամ սկաւառակ ունեն։ Այդ բոլոր կորածայր ու ճանկաւոր և դալարուն ձևերը, թէև խոտորմունք են Սվաստիկայի բնագիծ ձևից, Սվաստիկային են վերաբերուում։

Այլ և այլ անուններ է ունեցել Սվաստիկան այլ և այլ երկիրներում, իսկ վերջին տարիներում համարեա ամէն տեղ սանսկրիտական հին անունն է առել՝ Սվաստիկա։

Լիտրէն իւր Ֆրանսերէն բառագրքում ստուգաբանօրէն հետևեալն է գրում։

Սուաստիկա կամ Սվաստիկա հնդկական աղանդների մօտ մի խորհրդաւոր ձևակերպութիւն էր։ Բրահմինները, որպէս նաև Բուդդայականները, յաւ էին ճանաչում այն։ Արևմտեան Հնդկաստանում Բուդդայականների քարանձաւների վէմերի վրայ արձանագրութիւնները իրենց սկզբում կամ վերջում կրում են այդ սուրբ կամ նուիրական նշանը։ Դա նոյնպէս տեսնուում է Հռոդոսական (Կիպրոս) և Ետրուրական կաւեղէնների վրայ։

Ստուգաբանութիւնը.—Սանսկրիտական մի բառ է՝ նշանակելով երջանկութիւն, հեշտանք, բարեբախտութիւն։ Բաղկացած է Սու (su) և աստի (asti) բառերից։ Սու նշանակում է «լաւ». աստի՝ նշանակում է «լաւ լինել» (goodbeing, այսինքն բարեկեցութիւն, բախտաւորութիւն, երջանիկ վիճակ)։

Դիւմուտիէն (Dumoutier) Սվաստիկան վերլուծում է այսպէս.

Սու, արմատ. նշանակում է բարի, լաւ, պատուական, կամ սուվիդաս (suvidas), բարգաւաճումն։

Աստի, երրորդ դէմք, եզակի, սահմանական ներկայ աս (as), լինել, բայի։

Կա, յետադաս մասնիկ է, գոյականացուցիչ։

Պրոֆէսոր Ուիտնէյ (Whitney) ասում է. Սվաստիկա—Սանս-

կրիտերէն, բառացի, «բարեբախտ»։ Սուաստի (Սու, լաւ, աստի, լինել), բարեբաստութիւն։

Մաքս Միւլլերն ասում է. Ազգաբանօրէն, սուաստիկա ծագում է սուաստի-ից, իսկ սուաստի՝ սու-ից, «լաւ», և աս-ից, «լինել»։ Սուաստի յաճախ պատահում է Վէդայում՝ թէ որպէս գոյական, երջանկութիւն իմաստով, և թէ որպէս մակբայ «լաւ» կամ «ողջ»։ Սվաստի-կա ածանցումը աւելի ուշ թուականի բան է և նշանակում է միշտ մի բարեգուշակ նշան, որպիսինները շատ յաճախ գտնուած են Բուդդայականների և Ջաինների մէջ։

Նախընթաց բոլոր բացատրութիւնները վերաբերւում են ներկայումս ընդունուած Սվաստիկա անուանը։ Իրան տրուած անունից շատ առաջ է գոյութիւն ունեցել Սվաստիկա նշանը։ Նա գոյութեան մէջ է եղել Բուդդայական կրօնից և սանսկրիտ լեզուից էլ շատ առաջ։

Յունական, լատինական թառ խաչերը եգիպտական մեհենագրութիւնների մէջ ներկայացած են կռանի կամ մուրճի ձևով փլցնելու, մանրելու, կամ խփելու գաղափարը տալով. և այդ հանգամանքով էլ նկատուած են որպէս գործի արդարութեան և պատուհասիչ վնասի, ուստի և կերպացնում էին Հօրուսին և միւս աստուածներին։ Նոյնպիսի խորհրդանիշ իմաստներ ունէին խաչերն Արևելքի հին դասական երկիրներում։

Խորհրդաւոր նշանակութիւն եւ մեկնութիւն։—Շատ տեսութիւններ եղած են Սվաստիկայի խորհրդանիշ լինելու մասին, թէ նորա վերաբերութիւնը հինաւուրց աստուածութիւններին, և թէ ինչ և ինչ յատկութիւններ է ներկայացնում նա։ Գրողներից ոմանք համարում են, որ նա առանձին առանձին նշանակ (emblem) է եղել Զևսի, Բահալի, արևի, արև-աստուածի, հուր-աստուած Ագնիի, արևակառքի, անձրև-աստուած Ինդրայի, երկնքի, երկինք-աստուածի, և վերջապէս աստուածութիւնների աստուածութեան, Մեծ Աստուծոյ, Տիեզերքի Արարչի և Բարեկարգչի։ Նա նոյնպէս ընդունուած է եղել խորհրդանիշը լինել լոյսի կամ լոյսի աստուածի, գալարծուն փայլատակի, ջրի։ Մի քանիսը կարծում են, որ նա հին Արիական խորհրդանիշն եղած լինի։ Ուրիշների կարծիքով նա ներկայացնում է Բրահման, Վիշնուն, և Սիվան, Ստեղծողը, Պահպանողը, Եղծողը։ Նա երևում է Բուդդայի ոտնակնիքների վրայ, Հնդկաստանի լեռների կարծր վէմերի երեսին քանդակուած։ Նա կերպացնում էր լատինների Որոտահան և Թօնընկեց Արամազդին (Իուպիտէր), և Սկանդինաւիացիների Թոր-ին։ Այս վերջին դէպքում նա նկատուած է եղել—սակայն սխալմամբ—Թորամուրճի (Thor hammer) մի տեսակը։ Վերջապէս մի հեղի-

նակի կարծիքով՝ նա մերձաւոր յարաբերութիւն ունէր Եգիպտոսի և Պարսկաստանի Լօտօս նշանի հետ։ Հեղինակներից ոմանք սերանդամի (առականք) իմաստ են յատկացրել նորան, և այլք՝ թէ նա մարդկութեան սերական սկզբունքն էր ներկայացնում, և էգի խորհրդանիշն էր։ Նորա երևան գալը աստուածուհիներից մի քանիսի անձի վրայ, որպէս Արտեմիսի, Հերայի, Դեմէտրէի, Աստարտէի, և Հիսարլիկի բլրի վրայ գտնուած կապարեայ աստուածուհու՝ Քալդէական Նանայի (սորա արգանդը ծածկող եռանկիւնի վահանի վրայ), պատճառ է տուել համարել այն որպէս նշան բեղմնաւորութեան։

Նախայիշատակեալ տեսական դիտողութիւնները ծրարուած են խաւարով և առարկայի հնութեան մէջ կորած։ Այն, որ թւում է Սվաստիկայի ամէն ժամանակի ստորոգելիքը (յատկութիւնը) եղած լինել, դա նորա իբրև յուռութք (charm) կամ հմայք (amulet) լինելու հանգամանքն է, նշան շնորհքի, օրհնութեան, երկար կեանքի, բարի բախտի, բարի աջողութեան, երջանկութեան, բարգաւաճման, չար աչքից պահպանելու ևայլն։ Այդ հանգամանքը պահպանուել է և՛ նորագոյն ժամանակներում, և Սվաստիկան, մինչդեռ Բուդդայական մի աղանդի կողմից ճանաչուած է եղել որպէս մի սուրբ և նուիրական խորհրդանիշ, Հնդկաստանի, Չինաստանի և Եապոնիայի հասարակ ժողովրդից գործ է ածուել մշտապէս որպէս նշան երկար կեանքի, բարի իղձերի և բարի բախտի։

Եւ սակայն, ուրիշ ինչ կերպ էլ ներկայացած լինէր Սվաստիկայի նշանը, և որքան էլ շատ ու շատ իմաստներ ներկայացնէր, նա ամէն ժամանակ եղել է մի զարդի ձև։ Նա կարող էր վերևի մի քանի կամ բոլոր նշանակութիւններովը գործ ածուած լինել, սակայն նա մշտապէս եղել է մի զարդական ձև։

Սվաստիկա նշանը մեծ ծաւալ է ունեցել և գործնականօրէն սփռուած է եղել երկրագնդի երեսին, եթէ ոչ ամբողջի՝ գէթ ընդարձակ մասի վրայ, նախապատմական ժամանակներում, թէպէտ նորա կիրարկութիւնը մի քանի երկրների մէջ շարունակուել է նորագոյն ժամանակներում ևս։

Սվաստիկայի նախնական ձևը։—Ռ. Բրինտօնը նկատում է. Սվաստիկան աւելի խաչից է յառաջ եկած քան շրջանակից, և հեղինակն ընդունում է այդ հաւանական, թէպէտև անկարելի է ապացուցանելն այս կամ այն։

Հեղինակներից շատերը, ի միջի այլոց Դ'Ալվիէլլան, Գրէգը և Թալմասը ծանուցել են Սվաստիկայի ձևափոխական զարգացումը, սկսելով եռաթևից (Triskelion), անցնելով քառաթևին (Tetraskelon) և ապա Սվաստիկային։ Սակայն մի թեթև քննու-

թիւն հերիք է այդ վարկածը շրջելու համար։ Նախ և առաջ եռաթևեանը, որ այդ վարկածի հիմքն է, իւր առաջին երևոյթն արել է լիկիական դրամների վրայ։ Իսկ այդ երևումը դրամահատութեան առաջին կոչուած դարաշրջանումն էր, այսինքն ընդմէջ 700 և 480 Ք. Ա., և դեռ կայութիւն չէր ստացել մինչև երկրորդ և նոյն իսկ երրորդ դարաշրջանը, 280-ից 240-ը Ք. Ա., երբ նա անցաւ Սիկիլիա։ Մինչդեռ Սվաստիկան արդէն երևացել էր Հայաստանում, Հիսարլիկի բլրի վրայ, հիւսիսային Իտալիայի Terramar-ների և հարաւային Իտալիայի սափորների վրայ հարիւրաւոր, մինչև իսկ կարելի է հազարաւոր կամ աւելի տարիներ առաջ քան այդ ժամանակը։ Դ'Ալվիէլլա կոմսը նորան տեղ է տալիս տասնևչորսերորդ կամ տասնևերեքերորդ դարի ժամանակաշրջանում Ք. Ա., դեռ մի անծանօթ անսահման անցեալ էլ այն կողմը։ Անկարելի է որ 480-ին Ք. Ա. առաջին անգամ երևեցած մի խորհրդանիշ նախածնողն եղած լինի մի ուրիշի՝ որ երևացել է 1400 կամ 1300-ից Ք. Ա., ասել է նորանից իբրև հազար տարի առաջ։

Ծագումն ու տեղը.—Նախապատմական ժամանակի հնախոյզները գտել են Եւրոպայում շատ նմոյշներ զարդական արձանագործութեան և քանդակների, Հնաքարեան-դարին պատկանող, բայց խաչը Սվաստիկայ կամ այլ որևէ ձևով չէ յայտնուել։ Նորաքարեան-դարում էլ, որ տարածուած է եղել համարեա ամբողջ աշխարհի երեսին զարդարչութեան բազմաթիւ երկրաչափական ձևերով, խաչի ոչ մի ձև երևում չէ խոր հնութեան մէջ որպէս խորհրդանիշ կամ ցուցիչ որևէ ուրիշ բանի, բացի զարդական դիտումից։ Բրոնզէ դարում, սակայն, Սվաստիկան յայտնւում է դիտաւորութեամբ գործածուած թէ որպէս խորհրդանիշ և թէ որպէս զարդ։ Արդեօք արևելքում էր իւր առաջին երևումը և այնտեղից իւր ծաւալումը Նախապատմական Եւրոպայի մէջ, թէ դորա հակառակն էր ճշմարիտը, այժմ ստուգութեամբ որոշել կարելի չէ։ Ոմանց կարծիքով դա պարուրուած է այն միւս ջերմութեամբ պայքարուած ու շատ վիճուած խնդրի մէջ՝ որ վերաբերւում է Արիական ժողովուրդների ծագման տեղին և սփռուելու եղանակին ու ճանապարհներին։ Հաւանականութիւն կայ ցոյց տալու, որ դա պատկանում է մի աւելի նախնագոյն ժամանակաշրջանի և կապ ունի նոյնանման լուծելու խնդրի հետ, որ վերաբերւում է բրոնզի ծագման տեղին և տարածուելու եղանակին ու ճանապարհներին։ Արևելեան Ասիայո՞ւմ էր բրոնզի գիւտը և նրա գաղթականութիւնը դէպի արևմտակողմ՝ Եւրոպայի մէջ, թէ՞ նա գտնուած էր Միջերկրականում և այստեղից էլ իւր տարածումը։ Սվաստիկան տարածուեց այն միևնոյն գաւառների միջով, որոնցով տարածուել

էր բրոնզն էլ, և ամենայն հիմք կայ կարծելու թէ նոքա յառաջ են խաղացել համաժամանակ—արդեօք իրենց ծագման սկզբո՞ւմ՝ թէ ուշ, անորոշ է։

Սվաստիկայի առաջին երևումը հաւանական է թէ Արևելքում էր, յատկապէս ո՛ր երկրում՝ անկարելի է ասելը, բայց հաւանօրէն կենդրոնական և հարաւ-արևելեան Ասիայում Բրահմինների և Բուդդայականների նախորդների կամ յառաջընթացների մէջ։ Յամենայն դէպս մի կրօնական և խորհրդանշական նշանակութիւն յատկացուած էր նորան այդ տեղերի նախնապէս ծանօթ ժողովուրդների կողմից։

Բոլոր վերոգրեալը Սվաստիկայի մասին մենք քաղուածօրէն յառաջ բերինք Միացեալ Պետութիւնների Ազգային Թանգարանի Նախապատմական Մարդաբանութեան Բաժնի խնամատար (վերատեսուչ) Թովմաս Վիլսօնի ընդարձակ և անչափ հետաքըրքրիլի տեղեկագրութիւնից, մատուցուած 1894-ին «Սմիթսօնիան Հիմնարկութիւն» կոչուած Ամերիկեան Ընկերութեան Ազգային Թանգարանի Վարչութեանը։

Այդ վերին աստիճանի շահագրգիռ ուսումնասիրական գործը ունի 255 էջ միջակ մեծութեան դիրքով, հարուստ 374 պատկերներով կամ ձևերով և 25 հատ պատկերացոյց գեղեցիկ տախտակներով,—ամենամաքուր գործ արուեստի,—որոնք ներկայացնում են պատկերներ արձանների, արձանագրութիւնների, բազմատեսակ անօթների, գործուածքների և գործիական առարկաների, որոնց վրայ այս ու այն ձևի տակ երևում է Սվաստիկա նշանը։

Շահաւէտ ենք համարում մի քանի բան էլ հատուածօրէն մէջ բերել պ. Վիլսօնի աշխատութիւնից Սվաստիկայի խորհրդաւոր նշանակութեան մասին ազգերի մէջ (մի քանիսը միայն կը յիշատակենք) և թէ ինչ իմաստով է կիրարկել այդ նշանը ժողովուրդներից սա կամ նա։

Հնդկաստան.—Պ. Գունդհի, Հնդկաստանցի, Բօմբէյ քաղաքից, Ջայինների (Jains) փիլիսոփայական վարդապետութեան աշակերտը հետևեալ կերպով է բացատրում Սվաստիկայի նշանակութիւնը։

«Սվաստիկան սխալ է մեկնաբանուած մեր հին Ջային փիլիսոփայութեան Արևմտեան կոչուած մեկնիչներից։ Սկզբումը աւելի բարձր գաղափար ունէին, բայց վերջերումս ոմանք մտածեցին թէ խաչը ներկայացնում էր միայն արական և իգական սկզբունքների բաղկացութիւնը։ Մինչդեռ մենք ֆիզիկական մակարդակի վրայ ենք և մեր հակումները դէպի նիւթի կողմը, մենք այն հարկաւոր ենք մտածում՝ միացնելու այդ երկու սկզբունքները

(սեռական) մեր ոգիապէս աճման համար։ Աւելի բարձր մակարդակի վրայ հոգին անսեռ է, և նոքա՝ որոնք իղձ ունին աւելի բարձր վերանալ ֆիզիկական մակարդակից՝ պարտաւոր են ջնջել սեռի գաղափարը։

Ես Զային Սվաստիկան կը բացատրեմ հետևեալ պատկերացումով. հորիզոնական և ուղղահայեաց գծերը, որոնք խաչաձև կտրում են իրար ուղիղ անկիւններով, կազմում են Ցունական խաչը։ Դոքա ներկայացնում են ոգին և նիւթը։ Մենք աւելացնում ենք էլի ուրիշ չորս գիծ՝ ծռելով դէպի աջ խաչի իւրաքանչիւր թևը, ապա երեք գունդ և մահիկ-եղջիւրը, և մի գունդ էլ մահիկի մէջ։ Այդպիսի խորհրդաւորուած գաղափարը այն է՝ թէ նիւթական տիեզերքում հոգիների գոյութիւնը չորս աստիճան ունի։ Առաջինը ամենաստորին վիճակն է—նախնական (archaic) կամ նախակերպչական կամ կերպագործողական (protoplasmic) կեանք։ Հոգին բարեշրջւում է այդ վիճակից դէպի յաջորդը—երկիրը իւր բոյսերով ու կենդանական կեանքով։

Ապա հետևում է երրորդ վիճակը—մարդկայինը. յետոյ չորրորդ կարգը—երկնայինը։ Երկնային բառը այստեղ առնուած է իմացնելու համար կեանք ուրիշ աշխարհներում՝ մերինից դուրս։ Այդ բոլոր աստիճանաւորումները նիւթի և հոգու միակցութիւններ (բաղկացութիւններ) են տարբեր սանդուղների վրայ։ Հոգեկան մակարդակը այն է, որում հոգին լրիւ ազատ է նիւթի կապանքներից։ Այդ մակարդակին հասնելու վախճանով, պարտ է ջանալ ձեռք բերել 3 գոհարները՝ ուղիղ հաւատ, ուղիղ գիտութիւն, ուղիղ վարք։ Երբ մէկն ունի այդ երեքը, նա անշուշտ ուզում է աւելի բարձր գնալ մինչև հասնի ազատութեան վիճակին, որի պատկերացումն է մահիկ-եղջիւրը։ Մահիկը նորածին լուսինն է ներկայացնում, որ երթալով աճում է։ Մահիկի ծոցի գունդը հոգու ամենագէտ վիճակն է ներկայացնում, երբ նա ժամանել է կատարեալ գիտակցութեան, ազատուել է, և ապրում է նիւթից մեկուսի։

Այդ մեկնութիւնը, համաձայն՝ խաչի մասին՝ Զային տեսութեանը, աղերս չունի արական և իգական սկզբունքի բաղկացութեան հետ։ Արական և իգական սկզբունքների պաշտամունքը, սեռի վրայ խարսխուած գաղափարներ, աւելի ստորև քան նոյն իսկ յուզական մակարդակը, երբէք կարող չէ վերանալ աւելի բարձր քան արուն և էգը։

Զայինները Սվաստիկա նշանն անում են երբ մենք մտնում ենք մեր պաշտամունքի տաճարը։ Այդ նշանը մեզ մտաբերել է տալիս երեք գոհարների ներկայացրած մեծ սկզբունքները, որոնցով մենք հասնելու ենք վախճանական բարուն։ Այդ խորհրդանիշները խտացնում են մեր մտածութիւնը և աւելի տեսական անում»։

Հայաստան.—Պ. Յ. Դը Մորգանը (Կահիրէի Զիզէհ թանգարանի վարիչը), ֆրանսիական կառավարութեան կարգադրութեամբ պեղումներ և ուսումնասիրութիւններ արաւ Ռուսական Հայաստանի նախապատմական հնութիւնների և հնախօսութեան շուրջը։ Իւր զեկուցումը վերնագրուած է «Նախնական մետաղեայ դարը Ռուս-Հայաստանում»։ Նա պեղեց նախապատմական գերեզմանների մի թիւ, և գտաւ նոցա մէջ գօտիների, անօթների և մետալիոնների վրայ քանդակուած այլևայլ ձևի խաչեր։ Սվաստիկան, թէպէտ կար, շատ սակաւ էր։ Նա այն գտաւ անագապղընձեայ (bronze) երկու լայնգլխանի կրծասեղների (պատկ. 4 և 5) և մի խեցեգործական կտորի վրայ (պտկ. 6) նախապատմական դամբարանների մէջ։ Կորածայր խաչաթևերը բոլորն էլ դէպի ձախ են ծռուած և համարուելու են պրոֆ. Մաքս Միւլլէրի Սուավաստիկան։



4



5

Կովկաս.—Պ. Է. Շանտրը գտաւ Սվաստիկան Կովկասում շատ մաքուր ձևի տակ։ 7 պտկ-ը ներկայացնում է այդ երկրի անագապղնձեայ մի դրբուագի (plaque, доска) մասունքը, գործածուած՝ մի գօտու կամ կամարի վրայ։ Մի ուրիշը թեթև ինչ տարբեր ոճով, բայց քառակուսի խաչով՝ թեւերը ուղղանկիւն դէպի աջ դարձած, նշանակուած է նորա (Շանտրի) 8-դ տախտակի վրայ, պտկ. 5. (Մեր պտկ. 7). դոքա պատկանում են երկաթեայ առաջին դարին, և աւելի բաղահիւս արուեստով են։ Այդ ոճը ներկայացնում էր որպէս կենդանիներ, այնպէս և երկրաչափական բոլոր ձևերը, խաչեր, բոլորակներ—համակեդրոն և այլապէս,—պարուրաձևեր (spirals), օձաձևեր (Meanders), սագաձև (chevrons), ձկնոսկրաձև կամ տառեխափուշ (herring bone), շեղան-

6



7



9



10



11

12

Свастика *Սվաստիկա* Svastika

կիւններ (losanges)։ *Դոցանից կան որ զոգաւորուած են մետաղի մէջ, կան որ զոգուռուցիկ են, կան էլ փորագրուածներ (խորաքանդակ). պատահում էլ է այդ կերպերը միասին զործ դրուած։ 8 պտկ-ը ցոյց է տալիս մի ուրիշ ձև, յաճախ գործածուած՝ և ենթադրել է տալիս որպէս մի կարելի փոխաշրջութիւն* (evolution) *Սվաստիկայի, նոյն տեղական հանգամանքներով և նոյն պղնձատախտակից։*



8

Պ. Ֆրէդերիկ Ռէմինգտօնը, համբաւաւոր արուեստագէտ և մատենագրող, մի յօդուած ունի, «Պարծենկոտ Կովապանը Ֆլորիդայում», ուր նա ճառում է այդ երկրում պաճարի համար խարանների դարբնոցի մասին։ Նորա իսկական խարաններից մէկը մի բոլորակ է՝ միջավայրում մի փոքրիկ խաչ։ Նորա դարբնութիւնը կայանում է խաչի իւրաքանչիւր թևը երկայնացնելում և մի գլանի միջոցով ծայրը կորացնելում, ձեւացնելով մի կոնաձև Սվաստիկա՝ որը, բաւական հետաքրքրական, իրապէս միևնոյնն է՝ որ Զէրքէզները գործ են դնում իրենց ձիերի վրայ։ Մաքս Օհնէֆալշ Ռիխտէրն ասում է թէ Աթարվա-Վէդայում պղընձեայ գործիքներն են յանձնարարուած շինելու համար Սվաստիկան. և այդպէս նա աշխատում է բացատրել այդ խարանակնքի կիրարկութիւնը Հնդկաստանում կովերի վրայ և Զէրքէզիայում ձիերի վրայ։ Ասում էր թէ նոյնը գործ է ածուել նաև Արաբիայում։

Ամերիկա.—Խաչի նշանակութեան մասին, Հիւսիսային Ամերիկայի Հնդիկների մէջ, Կոմս դ'Ալվիէլլան ասում է.—Անվիճելի է որ նախա-Կոլումբոսեան Ամերիկայի խաչը մի «Հողմավարդ» էր (rose des vents), *ներկայացնելով չորս կողմերը, որոնցից գալիս է անձրևը, կամ թէ նա ցոյց է տալիս կողմնացոյցի գլխաւոր կէտերը...։*

Գնդապետ Մալլերին (Mallery) *ցոյց է տալիս թէ նա էլի ուրիշ շատ բան է նշանակում։—*

«Չորս հողմերը։—Գնդապետ Մալլերիի գտած խաչը Յունա-

կան ձևի խաչն է, Հիւսիսային Ամերիկայի բնիկրացիների մէջ շատ սովորական, թերևս ամենապարզը լինելու պատճառով։ Դորանում չորս թևերը հաւասար երկայնութեան են, և նշանը կանգնում է վերուղիղ՝ մի ոտի վրայ և ոչ թէ երկուսի, որպէս Անդրէասեան խաչը։ Ցունական խաչը, Դակոտայների մէջ, ներկայացնում է չորս հողմերը՝ որոնք փչում են չորս այրերից, ուր ապրում էին մարդկանց հոգիները նախ քան մարդկային անձի մէջ մարմնանալը։ Բժիշկ մարդիկ բոլորը—այն է, երդմնեցողները և մոգերը—վեր յիշում են իրենց առաջին երազական կեանքը այնտեղերի մէջ, և ուսմունքն՝ որ ստացել են այնտեղ աստուածներից, դևերից և իմաստուններից. նոքա վերյիշում և նկարագրում են իրենց նախագոյակ կեանքը, բայց երազում ու խորհրդածում են միայն գալիք կեանքի մասին գերեզմանից այնդին։ Խաչի գագաթը ցրտային, համաշխարհակալ հսկան է, Հիւսիս-Հողմը, բոլորից հզօրեղը։ Անձի վրայ նա գլխին ամենամօտ է, իմացականութեան և տիրակալող խորհուրդների բնակավայրին։ Ձախ թևը սրտի պահատունն է. դա է Արևելահողմը, գալիս է կեանքի և սիրոյ բնակատեղից։ Ոտ՝ հալող, կիզող Հարաւ-Հողմն է, նշանակելով հրատոչոր կրքերի կայանը։ Աջ թևը ազնիւ Արևմտահողմն է, շնչելով ոգեկան երկրից, ծածկելով թոքերը, որից վերջապէս շունչը դուրս կը գնայ մեղմօրէն՝ բայց անծանօթ գիշերի ծոցը։ Խաչի կեդրոնը երկիրս է և մարդը, շարժուած աստուածների և հողմերի հակամարտ ներգործութիւններից»։

Վիշապաձանձը (Susbeca).—Հնդիկ տեղերից մի քանիսի, ի միջի այլոց Դակոտայների, մէջ գտնուած է լատին խաչը, այն է վերուղիղ՝ երեք անդամներով, հաւասար երկայնութեան, իսկ չորրորդը, ոտը, փոքր աւելի երկայն։ Դորա գործածութիւնը Ամերիկայի գիւտից առաջ է և վերաբերելի է աւանդութեանը և զրոյցներին։ Այդ խաչը նշանակում է վիշապաձանձը, այն է մոծակը։ Դա տեղական լեզուով կոչվում է «Սուսբէկա» և մի գերբնական էակ է, որ ունի խօսելու պարգևը և նախազգում է մարդուն վերահաս վտանգը, լռիկ մերձենալով նորա ականջին ուղիղ անկիւնով, ասելով «ցի», «ցի», «ցի», ձայնարկութիւն՝ որ հաւասար է ասելուն «նայիր տէս. անշուշտ գնում ես դէպի կորուստ». «Նայիր տէս»։ «Ցի», «ցի», «ցի»։ Վիշապաձանձի որպէս խորհրդաւոր և գերբնական էակ ընդունուելը վերագրելի է նորա յանկարծ երևալուն մեծ թուով։ Երեկոյի լռութեան պահին, երբ խաւարի ստուերներն իջնում են, լսվում է այդ ժամանակ մարգերում մի ձայն, ճպուռի կամ գորտի ձայնին նման, բայց անորոշ և երկարաձիգ. առաւօտուն Սուսբէկան կը թաւալարէ մարդի վրայ։ Դա նոցա գալու ձայնն է, բայց որտեղից են վերադառնում, ոչ ոք գիտէ։

Մոկիներն և իրենց նախահայրերը մեծ յարգ են մատուցել վիշապաձանձերին, որովհետև Օմանի կողմից յաճախ նոքա են ուղարկուել բաց անելու աղբրակները, որ խցած է եղել Մուլնգվան, և ուրիշ շատ օգտաշահութիւններ ժողովրդին ընձեռելու համար։ Պատանութիւնը, որ զոհուած ու փոխադրուած էր Հօ-բօ-բօ-ից, երկար ժամանակից յետ վերերևում էր մեծ երաշտի միջոցին, հսկայական վիշապաձանձի կերպարանքով, ածում էր անձրևային ամպերը Հօ-փի-տուի դաշտերի վրայ, տալով առատաբեր անձրևներ։

Սվաստիկայի թէ իբրև խորհրդանշան և թէ իբրև զարդանկար և թէ իբրև յուռութք կամ հմայեակ, որպէս աջողութիւն կամ բախտ բերող, չար աչքից պահող և այլն, գործածութեան մասին ազգերի մէջ, ուրիշ անչափ հետաքրքրական բաներ կան ժողովուած Թ. Վիլսօնի յիշեալ տեղեկատուական ժողովածուի մէջ։ Դիւցաբանութիւն, կրօնական հայեացքներ, հաւատալիքներ, փիլիսոփայական տեսութիւններ ներկայ և անդրաշխարհի կեանքի մասին, բազմաշահ տեղեկութիւններ, որոնք առաջնորդելու են ազգերի քաղաքակրթօրէն, ազգակցօրէն կապակցութեան մասին իսկութեան մօտիկ եզրակացութիւններ անելու, իբրև բռով շաղ տուած մարգարիտներ ասես լինեն ժողովածուի էջերի վրայ։ Մի հնագիտական-ազգագրական ճոխ հանդէս, ուր ականաւոր գիտնականները բանասէրի ձեռքից բռնած և Սվաստիկայի ընթացած շաւիղներով շրջեցնելով, զբօսեցնելով շահագրգիռ օգտակարովը, հին աշխարհի գերմարդից մինչև Ամերիկեան հնդիկն են տանում նորան ու բերում։ Ո՞րքան հին անուններ, որոնց մէջ, Դր. Ինմանի ասելով, մարմնացած են հին հաւատներ։ Անուններ, որոնք զարթեցնում են խորին հնութիւնից ծնացորդ հայի մէջ էլ մի ափշական հետաքրքրութիւն, երբ տեսնում է թէ ինչպէս իւր լեզուից բառեր մերձ են կանգնած ազգերի մէջ Աստուած և հաւատ ներկայացնող անուններին, որպիսի են զորօրինակ Ինդրա, Աթարան, Թոր և այլն, որոնց նշանակութեան կողքին ասես կանգնած լինեն և հայ բառերի նշանակութիւնը։

—

Ծանօթ.—Այս յօդուածը կազմուած է Հայոց Ազգագրական Ընկերութեան յատուկ խնդրով, որովհետև մեր այս Ընկերութիւնը 'ի նկատ առնելով՝ որ Սվաստիկան գտնուում է Հայաստանում ոչ միայն նախապատմական շրջանում, ինչպէս բացի դը Մորգանի և Շանտրի պեղումներից ցոյց են տալիս և Ե. Լալայեանինը՝ (նկար 9 բնական մեծութեան, բրոնզից) այլ և պատմական շրջանում, ինչպէս Անիի պարիսպների վրայ (նկար 10 և 11, որ առնուած են նկարիչ Ֆէդվաճեանի ժողովածուից), որոշեց ընդունել այդ՝ իբր Հայոց Ազգագրական Ընկերութեան խորհրդանիշ և կնիք, նախ ընդունելով նրան վերագրուած «յաջողութեան, երկար կեանքի, չար աչքից պահպանելու» յուռութային յատկութիւնը և երկրորդ ինքը վերագրելով նրան անվերջ յառաջադիմութեան արտայայտութիւն՝ քանի որ դա պատկերացուում է նաև մի ընդհանուր կեդրոնից ձգուող մարդկային չորս ոտների ձևով, (նկար 12) որոնք անվերջ կարող են դառնալ և յառաջադիմել։ Ե. Լ.